Հանրապետական
մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Գործնական աշխատանքի կազմակերպումը «Կերպարվեստ» առարկայի շրջանակներում

Վերապատրաստող, մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան

Ուսուցիչ՝ Գեղեցիկ Առաքելյան

2023

Բովանդակություն

Ներածություն……1

1.Ինչ է գործնական աշխատանքը.նպատակն ու խնդիրները……2

1.1 Գործնական աշխատանքների դասակարգումը……4

1.2 Մոտիվացիայի դերը «Կերպարվեստի» գործնական աշխատանքներում……5

2.«Կերպարվեստի» գործնական աշխատանքների կազմակերպումը բնության գրկում…..5

3.Գործնական աշխատանքի կազմակերպման օրինակ /թեմա ՝ Նատյուրմորտ/……7

4.Գործնական աշխատանքների օրինակներ……10

Եզրակացություններ և առաջարկություններ……11

Օգտագործված գրականության ցանկ……12

Ներածություն

Կերպարվեստային գործունեությունը իրականության ճանաչման յուրահատուկ ձևերից է ։ Եվ ինչպես ցանկացած ճանաչողական գործունեություն , այն միտված է կերտելու տեղեկացված , ինքնուրույն , ստեղծագործող , ազատ և անկաշկանդ որոշումներ կայացնող անհատ ։

Հետազոտական աշխատանքի արդիականությունը

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա ՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ ։ Որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջներին արագորեն հարմարվելու , տեղաշարժվելու կարողությունը ։ Այսպիսով , նմանատիպ մասնագետներից պահանջվում է տեսական գիտելիքների իմացություն , դրանք կիրառելու կարողություն և հմտություն , դիրքորոշում ։ Կարևորվում է այն , որ աշակերտը ուսումնական հաստատությունից դուրս գա այնպիսի գիտելիքներով , որոնք նա կկարողանա կիրառել գործնականում ։ Արդեն վաղուց առաջին տեղում չեն այն տեսական գիտելիքները , որոնք կիրառելի չեն գործնականում ։ Հատկանշական է , որ աշակերտը ,ստանալով տեսական գիտելիքներ , կատարի ճշգրիտ վերլուծություն , կայացնի ինքնուրույն ու ռացիոնալ որոշումներ և գտնի կիրառման արդյունավետ ուղիները ։Վերոնշյալ հանքամանքներով էլ պայմանավորված է աշխատանքի արդիականությունը։

Հետազոտական աշխատանքի նպատակը

Սույն աշխատանքի նպատակն է զարգացնել գործնական աշխատանքի կազմակերպման որակը «Կերպարվեստ» առարկայի շրջանակներում ։

Հետազոտության խնդիրները

Աշխատանքի նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները ՝

- Ներկայացնել գործնական աշխատանքի դերն ու նշանակությունը,
- Ուսումնասիրել գործնական աշխատանքի կազմակերպման արդյունավետ ձևերը,
- Ներկայացնել մոտիվացիայի կարևորությունը գործնական աշխատանքներում,
- Առաջարկել գործնական աշխատանքների կազմակերպման օրինակներ ։

1. Ինչ է գործնական աշխատանքը.նպատակն ու խնդիրները

Ասա ինձ , և ես կմոռանամ ,

Ցույց տուր ինձ , և ես կհիշեմ ,

Ներգրավիր ինձ, և ես կսովորեմ։

Չինական ասացվածք

Աշակերտների կողմից իրականացվող գործնական աշխատանքները ստեղծագործական աշխատանքների ձևերից են։ **Գործնական** են համարվում սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները , որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների , կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին ։Գործնական աշխատանքների ընթացքում պետք է իրականացվեն գիտելիքների որոնում,դրանց իմաստավորում,ամրապնդում,հմտությունների և կարողությունների ձևավորում և զարգացում , գիտելիքների ընդհանրացում և համակարգում։ Գործնական աշխատանքներն ստեղծում են այնպիսի իրավիճակներ , որոնք սովորողներին մղում են ինքնուրույն դիտարկումներ և եզրահանգումներ անելու , վերլուծելու ,ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու ,համադրելու , լուծումներ գտնելու և այլնի։Գործնական աշխատանքները բազմազան են ՝ մոդելավորում , տեսանյութերի ստեղծում , բանավեճ , քննարկում , գունանկարի և գծանկարի կատարում , ծեփակերտում , դերախաղի իրականացում , ևն։**«Կերպարվեստ»** առարկայի գործնական մասն իրականացվում է կերպարվեստի հիմնական տեսակների ուսումնասիրմամբ / գծանկար ,գունանկար , քանդակ կամ ծեփակերտում ,դեկորատիվ աշխատանքներ ։

Գործնական աշխատանքների հիմնական **նպատակներն ու խնդիրներն** են ՝

- ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,
- նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության շարունակության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը։

1.1 Գործնական աշխատանքների դասակարգումը

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը , և ըստ դրա գործնական աշխատանքները բաժանվում են 3 հիմնական խմբի՝

- **վերարտադրողական** , որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու ՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը , /օրինակ ՝ պարզ առարկաների պատկերում , դրանց գունավորում, ևն /,
- **մասամբ որոնողական** , երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ , լուծի իրեն առաջադրված խնդիրը /օրինակ ՝ լույս ու ստվերի ընդգծում , գուներանգների օգտագործում/,
- **ստեղծագործական** , երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար ՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ /օրինակ ՝ ամբողջական պատկերի ստացում,նկարին տարածականության հաղորդում/ ։

1.2 Մոտիվացիայի դերը «Կերպարվեստի» գործնական աշխատանքներում

Ինչպես Սարյանն է ասում՝

«Զարմանքը հասարակ բան չէ։Զարմանալու ընդունակությունը բնության կողմից մարդուն տրված մեծագույն պարգևներից է։Որքան այն պակասում է մարդու մոտ,այնքան աղքատ է նա իր հոգով,և այնքան ավելի է նրա մեջ քար անտարբերությունը։Իսկ անտարբերությունը բթացման առաջին և ամենահիմնական պայմանն է։»

Մարդկային վարքագծի գրեթե բոլոր ասպեկտներում մոտիվացիան շատ մեծ դերակատարություն ունի։ Ցանկացած որոշում կայացնելիս մենք առաջնորդվում ենք մոտիվացիոն ներքին մղումներով։ Գործնական աշխատանքում երեխան պետք է դառնա ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցը։ Հետևաբար, ուսուցիչը պետք է երեխայի մեջ արթնացնի դրական հույզեր ,նկարչական գործունեության նկատմամբ ցուցաբերվող ուրախություն և բերկրանք, վստահություն սեփական կարողությունների նկատմամբ ,մտահղացման և գեղարվեստական գործունեության ինքնուրույնություն ։Երեխային մոտիվացնելու համար գոյություն ունեն մի քանի մարտավարության ձևեր/դիտարկումներ,ջերմացնող վարժություններ,հետաքրքիր և հարմարավետ միջավայրի ապահովում,նյութերի և նկարչական հնարների բազմազանություն,բնության մեջ աշխատելը,և այլն/։ Մենք գնում ենք բնություն՝ ոգեշնչվելու…

2.«Կերպարվեստի» գործնական աշխատանքների կազմակերպումը բնության գրկում

«Մենք գնում ենք դեպի բնություն՝ ինքներս մեզ գտնելու համար»

Ջոն Մյուիր

Ոգեշնչմանը սպասելու փոխարեն, ավելի արդյունավետ է ոգեշնչում փնտրելը։Ինչպես արդեն նշվեց բնությունը ոգեշնչման լավագույն աղբյուրներից մեկն է։Դասասենյակից դուրս գտնվող «դասարանը» կարող է լինել ամենաարժեքավոր , ամենաթանկ միջոցը , որը , սակայն շատ քիչ է օգտագործվում ։Անընդհատ դասասենյակում մնալը կարող է խեղդել երեխայի երևակայությունն ու ստեղծագործական ունակությունները ։Բնության գրկում գործնական աշխատանքների կազմակերպումը հիանալի միջոց է ուսումնասիրելու այդ կախարդական

աշխարհը ,զգալու այն,սովորելու բնությունից,ինքնուրույն դատողություններ անելու,տպավորությունները թղթին հանձնելու, և ինչու չէ,նաև զարմանալու։

Երեխան իր աչքերով է տեսնում տարածության մեջ շրջապատող առարկաների օրինաչափությունները,դրանց ընդհանուր տեսքը հեռավորության մեջ, և պատկերման առանձնահատկություններն ուսումնասիրվում են հեռանկարչության մեջ։Երբ երեխաները նկարում են բույսեր,կենդանիներ ՝ արտատպելով գրքերից,նկարներից,որոնք դասարանից դուրս գոյություն ունեն իրենց բնական վիճակում,ապա նրանք զրկվում են բնօրինակի հետ աշխատելու մեծ հնարավորությունից։Երեխան բացահայտում է բնությունը,տեսնելով արևի լույսը , առարկաներից ընկնող ստվերները, շարժվող ամպերը, զգում է քամու շունչը։

Բնությունից ստացված տպավորությունները,երեխան կարող է **կիրառել** այլ նկարներում։Օրինակ՝բնության մեջ ուսումնասիրելով տերևը,ճյուղը,ծաղիկը,և այլն ,նրանք կարող են դրանք ավելի հմտորեն պատկերել նատյուրմորտի մեջ,այլ բնանկարներում,դեկորատիվ աշխատանքներում։

Գործնական աշխատանքի ընթացք

3. Գործնական աշխատանքի կազմակերպման օրինակ /թեմա ՝ Նատյուրմորտ/

Ստորև ներկայացնում եմ «Կերպարվեստի» գործնական աշխատանքի օրինակ

Դասարան ՝ 4

Դասի թեման ՝ Նատյուրմորտ

Դասի տեսակը ՝ գործնական

Դասի նպատակը ՝ նպաստել նկարչական հմտությունների և կարողությունների զարգացմանը բնօրինակից նատյուրմորտի պատկերման գործընթացում։

Վերջնարդյունքներ ՝ ստանալ նատյուրմորտ լույս ու ստվերի ընդգծումով,գույների և գուներանգների օգտագործմամբ և առարկաների կառուցման կանոնների պահպանմամբ։

Դասի կահավորումը ՝ նատյուրմորտի ժանրով կատարված աշխատանքներ,նատյուրմորտի համար նախատեսված առարկաներ,նկարչական նյութեր և պիտույքներ։

Դասի ընթացքը ՝

1. **Նախապատրաստական մաս**

- աշխատատեղերի կազմակերպում,
- թեմատիկ միջավայրի ապահովում,
- նատյուրմորտի տեղադրում դասասենյակի տեսանելի մասում,
- հարց-պատասխանի միջոցով վերհանել աշակերտների գիտելիքները նատյուրմորտի մասին.

Հարցեր՝

- Ի՞նչ է նատյուրմորտը,
- Ի՞նչ է նշանակում «նատյուրմորտ» բառը ։

2. **Թեմայի հաղորդում**

- **Խթանման փուլ**-ցուցադրվում է նատյուրմորտը,բացատրվում է կազմությունը,կատարվում է նատյուրմորտ կազմող առարկաների երկրաչափական ձևի վերլուծություն։Խոսվում է գույների և գուներանգների մասին,որոշվում է լույսի և ստվերի ուղղությունը,ցուցադրվում է աշխատանքի կատարման քայլաշարը։Կախված առարկաների ձևից ՝ ընտրվում է թղթի համապատասխան դրվածք։

- **Իմաստի ընկալում**-սահմանվում է ժամանակ և տրվում է գործնական աշխատանքի մեկնարկը։Աշխատանքի ընթացքում շրջել,տալ անհրաժեշտ ցուցումներ ՝ չխանգարելով սովորողի ինքնուրույն գործունեությանը։
- **Կշռադատման փուլ**-կատարվում է հետադարձ կապ,երեխաները հիշում են բնության գրկում իրենց կատարած էտյուդները,ճեպանկարները և կապ են հաստատում «նատյուրմորտ» բառի իմաստի հետ/«նատյուրմորտ» թագմանաբար նշանակում է անկենդան բնություն/։Սովորողները անում են հետևություններ։Այս ծաղիկները մայր բնությունից պոկված մասնիկներ են,որ այսօր մենք պատկերեցինք։

3. Կատարվում է աշխատանքների ընդհանուր ցուցադրում,վերլուծում և ինքնագնահատում ըստ քայլերի ճիշտ պահպանման,որի արդյունքում սովորողը գիտակցում է իր ձեռքբերումներն ու բացթողումները։Վերջնարդյունքների տեսլականը դառնում է իրատեսական։

Վերջնարդյունքներ

4.Գործնական աշխատանքների օրինակներ



Եզրակացություններ և առաջարկություններ

Հետազոտական աշխատանքի արդյունքում հանգել եմ այն համոզմանը,որ գործնական աշխատանքները տեսական գիտելիքները դեպի կիրառում տանող ճանապարհի ուղեկիցներն են և միտված եմ իմ դասերին դրանց կազմակերպման արդյունավետության բարձրացմանը և նորարարական ուղիներ փնտրելուն,կիրառելուն։

Կարևորում եմ գործնական աշխատանքների կազմակերպման այն ձևերը ,որոնց հիմքում ընկած է սովորողի գիտելիքի նպատակային կիրառման գիտակցումը։ Սովորողն իր գործունեության ընթացքում ձևավորում է արդյունքի տեսլական և կարողությունների,հմտությունների կատարելագործման շնորհիվ այն փորձում է դարձնել իրատեսական։

Նպատակային եմ համարում «Կերպարվեստի» դասերն առավել հետաքրքիր դարձնելու համար հաճախակի կատարել միջավայրի փոփոխություն։Իսկ այդ միջավայրը բնությունն է,որն իմ կարծիքով սովորեցնում է սովորել։Բնությունը մոտիվացնում է,փնտրելու և ուսումնասիրելու ուղիներ է առաջադրում,օգնում է ինքնաբացահայտմանը։Բնությունը երեխային տալիս է անսահման ազատություն,որն է մղում է ճիշտ կողմնորոշման ։

Առաջարկում եմ կերպարվեստային գործունեության մեջ աշակերտների համար ապահովել ազատ աշխատելու ,ստեղծագործելու հնարավորություններ։

Օգտագործված գրականության ցանկ և հղումներ

1.«Կերպարվեստ» առարկայի չափորոշիչ և ծրագիր։Լրամշակված տարբերակ,ԿԱԻ ,2011

2.Մ. Պետրոսյան-«Կերպարվեստ» ուսուցչի ձեռնարկ,1-4րդ դասարաններ,2014

3. Մ. Սարյան-«Արվեստի մասին»

4.Б .Барбер -«Учимся рисовать за 6 недель»,2022

5.Walter Foster-“Drawing basics”,2022

6.Н.Я. Маслов-Пленэр.-М.,1984

7. https://www.format.com/

8. https://howtoartist.com/

9. https://www.darkyellowdot.com/